ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 4 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:
3. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:
4. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:
5. 2021 թվականին կազմակերպվող վարձատրվող հասարակական աշխատանքներին մասնակցելու համար համաձայնություն տալու մասին:
6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում քամու պատճառով կոտրված ուռենին Հովիկ Ավետիսյանի ընտանիքին տրամադրելու մասին:
7. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող չօգտագործվող ոռոգման խողովակաշարը և գազատարը ապամոնտաժելու համար թույլտվություն տալու մասին:
8. Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:
9. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի չօգտագործվող խողովակաշարից ապամոնտաժելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:
10. Գլաձոր համայնքի կողմից 2021 թվականին ներկայացվող սուբվենցիայի ծրագրային հայտերին համաձայնություն տալու մասին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			

Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 43

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ 2021 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021թ. ապրիլի 14-ի թիվ 43 որոշման

Եկամտային մաս

ՀՀ	Եկամտատեսակ	Տարեկան պլան	Նախատեսված /I եռամսյակ/	Կատարողական / I եռամսյակ /	Կատարման տոկոս
1	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	6500.0	1000.0	427.1	42
2	Գույքահարկ	27000.0	5000.0	3956.6	79
3	Տեղական տուրքեր	1000.0	200.0	126.3	63
4	ընդամենը հողի վարձակալությունից եկամուտներ	2500.0	500.0	455.8	91
5	Խմելու ջուր	5000.0	1000.0	505.7	50
6	Աղբահանություն	5000.0	1000.0	510.0	51
7	Ծնողական մուծում	6500.0	0	0	0
	Ընդամենը սեփական եկամուտ	**53500.0**	**8700.0**	**5981.5**	**69**
8	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	170988.0	42747.0	42747.0	100
9	Այլ ոչ հարկային եկամուտ	3500.0	555.4	555.4	
10	Հողի օտարումից մուտքեր	7000.0	6155.4	6155.4	
	Ընդամենը	234988.0	58157.8	55439.3	

Ծախսային մաս

ՀՀ	Ծախսերը	Հոդված	Նախատեսված /տարեկան/	Կատարողական / I եռամսյակ /
1	Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	4111	48500.0	11381.1
2	Էներգետիկ ծառայություններ	4212	4000.0	2262.0
3	Կոմունալ ծառայություններ	4213	30000.0	7.1
4	Կապի ծառայություններ	4214	400.0	78.2
5	Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	4221	500.0	269.0
6	Համակարգչային ծառայություններ	4232	400.0	144.0
7	Տեղեկատվական ծառայությունների ձեռք բերում	4234	100.0	0
8	Կառավարչական ծառայություններ	4235	1000.0	0
9	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1300.0	0
10	Մասնագիտական ծառայություն	4241	800.0	160.4
11	Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և շինարարություն	4251	16587.9	0
12	Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	4252	600.0	0
13	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	1500.0	16.0
14	Տրանսպորտային նյութեր	4264	2200.0	200.0
15	Կենցաղային նյութեր, հանրային սնունդ	4267	400.0	0
16	Հատուկ նպատակային նյութեր	4269	3600.0	367.0
17	Դրամաշնորհներ	4637	92500.0	19819.5
18	Այլ կապիտալ դրամաշնորհներ	4657	1500.0	0
19	Սոցիալական նպաստներ	4729	6000.0	1845.0
20	Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	200.0	200.0
21	Պարտադիր վճարներ	4823	550.0	155.0

22	Շենքերի և շինությունների շինարարություն	5112	11334.0	2678.9
23	Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում	5113	16955.2	317.6
24	Վարչական սարքավորումներ	5122	1900.0	0
25	Նախագծահետազոտական աշխատանք	5134	4000.0	500.0
	Ընդամենը		246427.5	40400.8

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի մի շարք որոշումներում կատարել փոփոխություններ, մասնավորապես՝

1) 2021 թվականի հունվարի 21-ի՝ «Գլաձորի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող ուղևորատար GAZ A64R45 մակնիշի միկրոավտոբուսը, ՈՒԱԶ 390945-552 բեռնաուղևորատար, GAZ KO-440N բեռնատար մեքենաները, ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորը և FD-5X հիդրոմուրճը անհատույց օգտագործման իրավունքով «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին փոխանցելու և նշված տեխնիկաներով մատուցվող ծառայությունների տեսակներն ու սակագները հաստատելու մասին» թիվ 07 որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետում՝ «11 000» թիվը փոխարինել «10 000» թվով, «14 000» թիվը՝ «12 000» թվով,

2) 2021 թվականի հունվարի 21-ի՝ «Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Արմեն Միլիտոնի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.06 հա վարելահողից 0.03 հա-ի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 11-Ա, և «Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Արմեն Լյուդվիգի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.04 հա վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» 12-Ա որոշումների հիմնական մասերից հանել «՝ առևտրի սրահ կառուցելու համար» բառերը,

3) 2021 թվականի մարտի 24-ի՝ «Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին» թիվ 39-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետում «Խաչատրյան» ազգանունը փոխարինել «Բաղդասարյան» ազգանունով:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			

Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 45

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի պահանջները՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Գլաձոր համայնքի /բնակավայրերի/ վարչական տարածքում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու համար՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 45 որոշման

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ

ՑԱՆԿ

ՀՀ	Գլաձոր համայնքի բնակավայրը, որի վարչական տարածքում գտնվում է հողը	Սեփականության իրավունքը	Հողատեսքի			Կադաստրային ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը	Լոտը	Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի տոկոսը/
			Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Չափը /հա/			
1	Վերնաշեն	Պետական	Գյուղատնտեսական	Այլ հողատեսք	0.51015	10-042-0316-0131 N 02042021-10-0034	1	275 480 /երկու հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր ութսուն/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 800%-ը
2	Գետափ	Պետական	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	0.87213	10-014-0128-0052 N 02042021-10-0017	1	10 648 710 /տաս միլիոն վեց հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր տաս/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 100%-ը
3	Վերնաշեն	Համայնքային	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	0.046	10-042-0130-0012 N 12042021-10-0009	1	236 810 /երկու հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր տաս/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 100%-ը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 46-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և Գլաձոր համայնքում փաստացի բնակվող արցախցի գործազուրկ քաղաքացիներին ժամանակավոր զբաղվածության ապահովման նպատակով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն 2021 թվականին վարձատրվող հասարակական աշխատանքներին մասնակցելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգը հաստատելու մասին» N 2119-Լ որոշման:

2. Սույն որոշման առաջին կետում նշված որոշման համաձայն՝ ներկայացնել հետևյալ ծրագրերը՝

1) «Գլաձոր համայնքի Վերնաշեն և Գլաձոր բնակավայրերի մշակույթի տներում սենյակների (պարի և այլ) վերանորոգում»,

2) «Գլաձոր համայնքի Գետափ և Վերնաշեն բնակավայրերի ֆուտբոլի դաշտերի, Գլաձոր բնակավայրի վոլեյբոլի դաշտի և հարակից տարածքների բարեկարգում»,

3) «Գլաձոր համայնքի Հայրենական Մեծ պատերազմի հուշարձանների և 2020 թվականի Արցախյան 2-րդ պատերազմում զոհված զինծառայողների գերեզմանների բարեկարգում և Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի դպրոցի ճաշարանի վերանորգում»,

4) «Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում ներհամայնքային ճանապարհների և Գլաձոր բնակավայրի մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգում»:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված աշխատանքներին մասնակցելու համար, որպես համայնքի կողմից ներդրում, թույլատրել համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 4251 /շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և շինարարություն/

հոդվածից ձեռք բերել անհրաժեշտ շինանյութերը՝ մինչև 5 000 000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամի սահմաններում:

4. Նշված հասարակական աշխատանքներում թույլատրել օգտագործելու «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տրամադրության տակ գտնող ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորը՝ աշխատանքների ավարտից հետո ներկայացնելով համապատասխան հաշվետվություն:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՔԱՄՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԿՈՏՐՎԱԾ ՈՒՌԵՆԻՆ ՀՈՎԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից, քամու պատճառով կոտրված և Մ 10 միջպետական նշանակության ավտոճանապարհին ընկած ուռենին, որպես վառելափայտ, տրամադրել Գետափ բնակավայրի սոցիալապես անապահով բնակիչ Հովիկ Ավետիսյանի ընտանիքին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 48

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ ԵՎ ԳԱԶԱՏԱՐԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Վայոց ձորի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրենի 2021 թվականի ապրիլի 5-ի 32-01/383 գրությունը և Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ թույլատվություն՝ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Հոպիկներ» հանդամաս տանող ճանապարհի հարակից տարածքում գտնվող չօգտագործվող ոռոգման խողովակաշարը, և 18-րդ փողոցում գտնվող չօգտագործվող գազատարը ապամոնտաժելու համար:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 49

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, համաձայն որի՝ Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մշակույթի տան դահլիճից, վերանորոգման արդյունքում, ապամոնտաժված 3.5 խ.մ տախտակները հաշվառվել են Գլաձոր համայնքի գույքային հաշվեկշռում:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 50

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՑ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի չօգտագործվող խողովակաշարից 55 մետր երկարությամբ 153 մմ տրամագծով երկաթյա խողովակը ապամոնտաժել և օգտագործել Գլաձոր բնակավայրի 10-րդ փողոցի 7-րդ տան դիմացի հատվածում ոռոգման ցանցի կառուցման համար:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 04 ***«14» ապրիլի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 51

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետի ա) կետը և այն հանգամանքը, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2021 թվականին Հայաստանի Հանրապետության բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ (սուբվենցիա)՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Գլաձոր համայնքի կողմից 2021 թվականին ներկայացվող՝ համայնքի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերին.

1) «Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրում մշակույթի տան դահլիճի նորոգում՝ մշակութային միջոցառումների իրականացման համար»,
2) «Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի գազիֆիկացում»,
3) «Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի ներհամայնքային ճանապարհի ասֆալտապատում (մինչև հին գերեզմաններ)»:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան կազմել և Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված ծրագրերի ֆինանսավորման հայտերի ամբողջական փաթեթները:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով ներդրում կատարելու համար՝ համայնքի 2021 թվականի բյուջեում նախատեսված են բավարար ֆինանսական միջոցներ:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			

Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.	բացակա		
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**